ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — ԹԻՒ 11 — ՆՈՅԵՄԲԵՐ 1887

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍԱՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը:
Բաժանողագին է կամիրի վճարելի՝ Տարեկան 8 ֆր. — 4 բր.: — Վեցամսեայ՝ 5 ֆր. — 2 բր. 50 կոպ.:
Մէկ թիւ առանձին կը վաճառուի 1 ֆր. — 50 կոպ.:
Խմբագրութեան կեդրոնամասը է՝ Վիեննա, Մխիթարեան Միաբանութեան Մայր վանքը:
Արեւելք՝ ի Կոստանդնուպոլիս եւ ի Զմիւռնիա՝ Ազգ. Միաբանութեան Վաճառատուներէն կ'ընդունուի առանց ճարտուղ ծախքոյ:
Արեւելքի ուրիշ քաղաքներուն համար՝ յիշեալ Վաճառատուներէն կրնան ճարտուղ ծախքն հաշուիլ:
Ծանուցմունքն առանձին սակարկութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ — Այլեւայլ վիճակք կամ դասակարգք մարդկային ընկերութեան:
ՀՆԱԳՈՅՆԱԿԱՆ — Պերսեպոլսոյ սեպագիրք:
ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Թոշնոց ճանչակը:
ԳՐԱԿԱՆ — Դպրոց Փարպեցու Պատմութեան Բառաշաբանը: — Փրոֆէսորի Միլլէր եւ Հայկական նոր մատենագրութիւն: — Թադէի Երիցու պատմական մէկ գործքը (Տոր ձեռագիր):
ԹԱՏԵՐԱԿԱՆ — Պր. Ստեփան Էջշեան եւ արդի հայ դերասանութիւն:
ԱՂԴԱԳՐՈՒԹԻՒՆ — Առածք Խոտորջրոյց:
ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — Մոմազարդութիւն:
ԲՈՐՈՅԱԿԱՆ
ՊԱՅՍԱԿԱՆ ՆՈՐՈՒԼԻՊ — Գաւեսիլիա:
ՍԵԼԵՒՍԵԼՔ
ՆՈՐՈՒԼԻՐՔԻ — ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍԻՐՔ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿՐԹԻՒՆԱԿԱՆ

ԸՆԼԻՒՍԵԼ ՎԻՃԱԿՔ ԿԱՄ ԴԱՍԱԿԱՐԳՔ ՄԱՐԴԿՈՒԹԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն է՝ Վրէ.)

Գ. Գործատուորք:

Գործաւորաց դասակարգին սահմանեալ է միւս դասակարգաց ծառայել, եւ այս ծառայութեամբ իւր յատուկ գոյութիւնն ապահովել: Գործաւորն յօգուտ եւ ի շահ իւր տիրանց կ'աշխատի. իւր աշխատութեանց պտուղը կ'առնուն տեարքն, եւ ի հատուցումն վաստակոցն՝ այնչափ ինչ կու տան իրեն, որչափ կարեւոր է կենաց պահպանութեան: Այսպէս է վիճակ բուն իրական գործաւորաց՝ որ արդեամբք գործակից կ'ըլլան արուեստագիտաց կամ գործատեարց, նիւթապէս իսկ անոնց արուեստին գործոց մասնակցելով եւ անոնց ձեռնարկութեանց ի գլուխ տարուելուն օգնելով:

Բայց գործաւորաց անունն, ճշդագոյն եւս խօսելով՝ գործաւորաց դասակարգի յորջորջանքն, հասարակօրէն ընդարձակագոյն մտաք կ'առնուի. եւ նոյն յորջորջանքք կ'իմացուին այն ամենայն դասք մարդկան, որ ինքնակաց վիճակ չունենալով եւ օրպիսի եւ իցէ եղանակաւ օտարներէ կախեալ ըլլալով, այս կամ այն ծառայութիւնը կը կատարեն անոնց համար, եւ իրենց կատարած պաշտօնին կամ գործոյն համեմատ՝ որոշեալ թոշակ կամ չափաւոր գրամական հատուցումն կ'ընդունին: Այսպէս են գլխաւորաբար այն մարդիկ որ երկրագործաց եւ վաճառականաց գործունէութեան կերպին իմն մասնակից կ'ըլլան, թէեւ վերջնոց գրեթէ երբեք գործաւոր անուն չի տրուիր: Նոյնպէս յայտնի դասակարգի բովանդակեալ կը համարուին բոլոր սպասաւորք կամ ծառայք, թէ անական գործոց զբաղին եւ թէ գործատանց աշխատութեանց:

Այս մեկնութենէն ըստ ինքեան կ'իմացուի՝ թէ յայտնի բազմութեան եւ յայտնի պէսպիսութեան գործոց եւ զբաղմանց՝ ի հարկէ աստիճանաւորութիւն գտնուելու է նկատմամբ ընկերական եւ քաղաքական գրից: Մանաւանդ զի օրինակաւ իւիք այս դասակարգին կը վերաբերին նաեւ այն ամենայն մարդիկ՝ զոր ի տեղիս տեղիս յիշատակեցինք անոգոյոց կամ ելոյն անուամբ, եւ որոց գլխաւոր նկարագիրներն են՝ հաստատուն կամ որոշ գործ չունենալ, տեղէ տեղ փոխուիլ, աւուրչէիւ գործել..., յորմէ ինքնին յայտ է թէ ասոնք նախընթացներէն շատ տարբեր եւ ստորնագոյն գրից եւ աստիճանի մէջ կը գտնուին:

digitised by A.R.A.R.@